ԱՀ սահմանադրության նախագծի իրազեկման կենտրոն

Ինչու՞	Ի՞նչն է փոխվում	Ի՞նչ կտա մեզ
1.Պատմական անվանումների վերականգնման անհրաժեշտություն 2.Գործող կառավարման համակարգի թերությունները 3. Կենտրոնացված իշխանության անհրաժեշտությունը 4. Պաշտպանություն և անվտանգություն 5. Հասարակական կյանքի զարգացում 6.Ժողովրդավարության զարգացումը 7.Օրենսդրական նախաձեռնության իրավունքի սահմանափակ շրջանակ 8.Ընտրական համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը 9.ՄԻՊ լիազորությունների ընդլայնման անհրաժեշտություն 10. ՏԻՄ բարեփոխման անհրաժեշտությունը	1.Արցախի Հանրապետություն 2.Հակակշիռների մեխանիզմների հստակեցում 3.Կառավարման համակարգ 4. Համակարգման արդյունավետություն 5. Երիտասարդների ներգրավվածություն հասարակական կյանքին 6.Լայն իրավունքներ ժողովրդին 7. Ժողովրդի անմիջական մասնակցություն քաղաքական կյանքին 8. Անցում համամասնական համակարգին 9. ՄԻՊ լիազորությունների ընդլանում 10. Համայնքների ինքնավարության բարձրացում	1.Նոր հեռանկարներ միջազգային ասպարեզում 2.Քաղաքական կայունության առկայություն ականոթյուն 3. Ամուր պետականություն 4. Պաշտպաված Արցախ 5. Հասարակական կյանքում երիտասարդության դերի բարձրացում 6. Կայուն ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն 7.Քաղաքացիական հասարակության կայացում 8.Քաղաքական համակարգի կայացում 9. Իրավունքի պաշտանության նոր երաշխիքներ

ԱՀ սահմանադրության նախագծի իրազեկման կենտրոն

1. Պատմական անվանումների վերականգնման անհրաժեշտություն

Սահմանադրության նախագծի առաջին հոդվածում նշվում է, որ Արցախի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն անվանումները նույնական են: Հենց այս դրույթն է դարձել բուռն քննարկումների առարկա: Բազում պատճառաբանություններ են բերվում ԼՂՀ անվանման պահպանման անհրաժեշտության կամ դրա քիչ գործածության դեպքում առաջ եկող խնդիրների շուրջ: Նախ՝ հստակեցնենք, որ ԼՂՀ անվանումը չի հանվում գործածությունից, այլ նախապատվությունը տրվում է Արցախի Հանրապետություն անվանմանը:

Արցախը մեր երկրի պատմական անվանումն է, ուստի Սահմանդրության այս նախագծով նախապատվությունը տրվում է Արցախի Հանրապետություն անվանմանը: Միջազգային հարթակում Արցախի Հանրապետություն անվանմամբ ներկայանալը նոր շունչ կհաղորդի մեր արտաքին քաղաքականության կառուցմանը, մինչդեռ ԼՂՀ անվանումը առաջացնում է բազմաթիվ վիճաբանություններ միջազգային տարբեր հարթակներում: Կան նաև բազմաթիվ տնտեսական առավելություններ Արցախի Հանրապետություն անվանման գործածման դեպքում: Այդ իսկ պատճառով նոր Սահամանդրության նախագծում հիմնականում գործածվում է Արցախի Հանրապետություն անվանումը:

ԱՀ սահմանադրության նախագծի իրազեկման կենտրոն

2. Գործող քաղաքական համակարգի թերությունները

Գործող կիսանախագահական հանրապետության համակարգի հիմնական բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ժողովուրդը ուղղակի ընտրությունների միջոցով ընտրում է երկու մարմիններ՝ Հանրապետության նախագահ և Ազգային ժողով, սակայն նախագահը, փաստորեն, գործադիր իշխանության ղեկավարը չի հանդիսանում: Գործող կառավարման համակարգի հիմնական թերություններն են՝

1. Եթե ԱԺ-ում նախագահը ունի քաղաքական մեծամասնություն, իսկ խորհրդարանում բացակայում են հակակշիռները, մեծանում է քաղաքական մենիշխանության վտանգը, ինչն էլ կարող է հանգեցնել նախագահի բացարձակ իշխանության
2. Հստակեցված չեն նախագահի լիազորությունները գործադիր իշխանության և Սահմանադրության պահպանման բնագավառում
3. Առկա է անհրաժեշտություն գործադիր իշխանության դերի, իրավասության շրջանակների և պատասխանատվության հստակեցման բնագավառում:
4. Գործող կառավարման համակարգը չի երաշխավորում գործադիր իշխանության միասնությունը և նրա իրական քաղաքական պատասխանատվությունը:
5. Եթե ԱԺ-ը անվստահություն է հայտնում նախագահի կողմից ձևավորված Կառավարությանը, Կառավրությունը կարող է ցրվել, իսկ նախագահը, փաստորեն, ոչ մի քաղաքական ու իրավական պատասխանատվություն չի կրում իր կողմից ձևավորած կառավարության գործունեության համար: Այսպիսով, կարող ենք ասել, որ կիսանախագահական կառավարման համակարգում քաղաքական պատասխանատվության մեխանիզմները թերի են:

ԼՂՀ առջև ծառացած մարտահրավերները պահանջում են ուժեղ և միասնական գործադիր իշխանության առկայություն, որն ի վիճակի կլինի ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական իրավիճակում արդյունավետ կենտրոնացնել երկրի ռեսուրսները և օպերատիվ արձագանքել ստեղծված իրավիճակի պահանջներին:

ԱՀ սահմանադրության նախագծի իրազեկման կենտրոն

3. Կենտրոնցված իշխանության անհրաժեշտությունը

Յուրաքանչյուր պատերազմող պետության կարևորագույն խնդիրներից մեկն է ունենալ կենտրոնացված իշխանություն : Ըստ գործող սահմանադրության ԼՂՀ-ն հանդիսանում է կիսանախագահական կառավարման ձև ունեցող պետություն, որը ենթադրում է իշխանության 3 թևերի՝օրենսդիր, գործադիր և դատական մարմինների առկայություն , որոնց գործունեությունը հավասարակշռում է պետության գլուխը՝հանրապետության նախագահը: ԼՂՀ աշխարհաքաղաքական դիրքը ստիպում է մեզ ունենալ կենտրոնացված իշխանություն, որը պետք է իր ամրագրումը ստանա երկրի հիմնական օրենքում:

Նոր սահմանադրության նախագծում ևս պահպանվում է իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ավելի ընդարձակելով հանրապետության նախագահի լիազորությունների շրջանակը՝ նրան վերապահելով նաև գործադիր իշխանության ղեկավարի լիազորությունները, որն իր հերթին հանգեցնում է վերջինիս քաղաքական պատասխանատվության օրենսդիր մարմնի առջև: Նոր սահմանադրության նախագծով լուծում է տրվում ինչպես կենտրոնացված իշխանության անհրաժեշտության , այնպես էլ պետական ապարատի արդյունավետության բարձրացման խնդիրներին: Նոր սահմանադրությամբ նախատեսվում է զինվորական և ռազմական իշխանության կենտրոնացում հանրապետության նախագահի ձեռքում: Վերոհիշյալ ոլորտներում նախագահի լիազորությունների ընդլայնումը հիմք կհանդիսանա ամուր և կայուն պետականության կայացման գործում:

ԱՀ սահմանադրությանննախագծի իրազեկման կենտրոն

4. Պաշտպանությունը և անվտանգությունը

Պաշտպանությունը և անվտանգությունը յուրաքանչյուր պատերազմող պետության առաջնահերթությունն է: Գտնվելով մեծ տերությունների շահերի բախման կիզակետում և ունենալով Ադրբեջանի պես հակառակորդ, մենք չունենք ալյընտրանք քան հզոր կենտրոնացված իշխանություն ունենալը: Հզոր կենտրոնացված իշխանությունը մեր պետության և ազգի գոյության կարևոր նախապայմաններից մեկն է: Միևույն ժամանակ կարևոր է նաև ունենալ ուժեղ պառլամենտ:

Առաջարկվող նոր սահմանադրության նախագիծը խարսխված է կենտրոնացվաած գերագույն իշխանության և պառլամենտի գաղափարների հիման վրա: Նախագահը լինելով միաժամանակ և գլխավոր գերագույն հրամանատար և քաղաքացիական պաշտպանության շտաբի ղեկավար ավելի արդյունավետ կհամակարգի երկրի պաշտպանությունը հնարավոր արտակարգ իրավիճակի կամ ռազմական դրության պարագայում: Առաջարկվող պետական կառավարման համակարգի փոփոխությունը ապահովելու է ավելի ամուր պետական հիմքեր, որը իր հերթին պետության բնականոն զարգացումը և առաջընթացը:

ԱՀ սահմանադրության նախագծի իրազեկման կենտրոն

5. Հասարակական կյանքի զարգացումը

Ինչպես բոլոր ժողովրդավարական պետություններում, այնպես էլ մեր պետությունում՝ հասարակական փոփոխությունների հետ մեկտեղ ժամանակ առ ժամանակ նաև սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն է առաջանում:

Հասարակական կյանքն այնպիսի կենտրոնացված ոլորտ է, որն իր մեջ ներառում է հասարակության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքը, դրանց մեջ հասարակության ներգրավվածությունը: Քանի որ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտները մարդկանց կյանքի անբաժան մասն են կազմում, ուստի անհարաժեշտ է դրանց օրենսդրական կարգավորումը և ամրագրումը:

Կարևոր է նաև այդ ոլորտում երիտասարդության ներգրավածությունը, քանի որ այդպես ապահովում է հասարակական կյանքի ամուր զարգացումը: Նախագծում առաջարկվող կարևորագույն լուծումներից մեկը, մի կողմից դասական հիմնական իրավունքների, իսկ մյուս կողմից՝ սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիքների և պետության նպատակների սահմանազատումն է:

6. Ժողովրդավարության զարգացումը

Սահմանադրության նախագծի կարևոր փոփոխություններից մեկը վերաբերում է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ընդլայնմանը: Մասնավորապես, սահմանադրորեն ամրագրվել են երեխայի իրավունքները, ինքնաբուխ հավաքների, անձնական տվյալների պաշտպանության իրավունքները: Սակայն պետության խնդիրը ոչ միայն իրավունքների ամրագրումը և ճանաչումն է, այլև դրանց իրագործման համար մեխանիզմների և երաշխիքների սահմանումը: Սահմանադրության նախագծի 3-րդ գլուխը ուղղակիորեն նախատեսում է այդ երաշխիքները:

Սահմանադրորեն ամրագրվել է մարդու բարձրագույն արժեք լինելու հանգամանքը, ինչը համահունչ է իրավական և ժողովրդավարական պետության ոգուն, որովհետև յուրաքանչյուր ժողովրդավարական պետության հիմքն է հանդիսանում իրավունքի գերակայությունը:

7. Օրենսդրական նախաձեռնության իրավունքի սահմանափակ շրջանակ

Գործող Սահմանադրությամբ օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է ԱԺ պատգամավորներին, Կառավարությանը և Նախագահին:

Սահմանադրության նախագծի առանցքային դրույթ է ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ առնվազն 2,5 տոկոսի օրենսդրական նախաձեռնության իրավունք սահմանող նորմը/ Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն 2,5 տոկեսը ունի ԱԺ-ին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք:

Սա միանգամայն կարելի է համարել ժողովրդի կողմից քաղաքական կյանքին մասնակցելու միջոց, իսկ քանի որ մենք ունենք անելիքներ քաղաքացիական հասարակության գործում, ուստի սա կարևոր խթան է:

8. Ընտրական համակարգի բարեփոխումները

Սահմանադրական բարեփոխումների առաջարկվող տարբերակում Հանրապետության Նախագահի և Ազգային Ժողովի ընտրությունները անցկացվում են միևնույն օրը: Հանրապետության Նախագահի և Ազգային Ժողովի ընտրությունները անցկացվում են համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Ընտրելու իրավունքով օժտված են 18 տարին լրացած քաղաքացիները: Սահմանադրության բարեփոխված տարբերակում ընտրական իրավունք է վերապահվում նաև դատապարտյալներին, բացառությամբ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց:

Ազգային Ժողովի ընտրությունները անցկացվում են համամասնական ընտրակարգով: Համամասնական ընտրակարգի էությունը կայանում է նրանում, որ ընտրողները քվեարկում են ոչ թե առանձին թեկնածուների, այլ կուսակցությունների օգտին: Համամասնական ընտրակարգի միջոցով հասարակության տարբեր շերտեր՝ էթնիկական, կրոնական կամ ազգային փոքրամասնությունները հնարավորություն են ստանում ներկայանալ Ազգային Ժողովում:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կարող են անցկացվել ինչպես ուղղակի, այնպես անուղղակի ճանապարհով: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության անցկացման կարգի վերաբերյալ մանրամասները սահմանվում են օրենքով:

ԱՀ սահմանադրության նախագծի իրազեկման կենտրոն

9. Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների ընդլայնումը

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի սահմանադրական ամրագրումը կարևոր հենք է ժողովրդավարական պետության կայացման համար:

ՄԻՊ-ի լիազորությունների ընդլայնմամբ նաև ընդլայնվում է մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները: Նախագծով այս կարգավորումները նպատակ ունեն բարելավել և միջազգային իրավական չափանիշներին առավել համահունչ դարձնել ՄԻՊ-ի սահմանադրական հիմքերը,նաև նախատեսվում է ՄԻՊ-ի լիազորությունների տարածումը մասնավոր հատվածի վրա:

ՄԻՊ-ը հանդիսանալով անկախ պաշտոնատար անձ, նրա գործունեության վրա ոչ մի այլ մարմին չի կարող բացասական ներգործություն ունենալ ,ավելին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց վրա դրվում է հստակ պարտականություն՝ ՄԻՊ-ին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ ու պարզաբանումներ և աջակցել նրա աշխատանքներին,դրանով իսկ ավելի ամրապնդելով մարդու խախտված իրավունքների իրավական պաշտպանության հնարավորությունը:

ԱՀ սահմանադրության նախագծի իրազեկման կենտրոն

10. Տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխման անհրաժեշտությունը

Սահմանադրության նոր նախագիծը փոփոխություններ է նախատեսում նաև տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում: Նախագծում ելակետ է ընդունվել տեղական ինքնակառավարման համակարգում ավագանու դերի ամրապնդման անհրաժեշտությունը, ըստ այդմ էլ՝ սահմանվել է համայնքի ղեկավարի պատասխանատվությունը ավագանու առջև: Համայնքի ավագանու դերի բարձրացման մասին է վկայում նաև նախագծում ամրագրված այն դրույթը, ըստ որի համայնքի բյուջեն, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ընդունում է համայնքի ավագանին:

Նախագիծը նախատեսում է, տեղական հանրաքվեներից բացի, համայնքի գործերի կառավարմանը համայնքի բնակիչների անմիջական մասնակցության այլ եղանակներ, որոնք պետք է սահմանվեն օրենքով, ինչը համայնքի բնակիչներին հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ ներկայացնել իրենց շահերը տեղական նշանակության հարցերում:

Սահմանադրության նոր նախագիծը նաև լայն հնարավորություններ է ապահովում համայնքի բնակիչների սոցիալական և տնտեսական շահերի ներկայացման համար: Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը առավել մանրամասն կկարգավորվի տեղական